Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Թուրքիայի քաղաքականության համատեքստում

Գալոյան Կ.Ա.
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ (Հայաստան, Երևան)
karogaloyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Մեսխեթցի թուրքեր, Թուրքիայի քաղաքականություն, Հայաստանի անվտանգություն, Վրաստան, Սամցխե-Ջավախեթի շրջան։

Проблема месхетинских турок в контексте политики Турции

Галоян К.А.
Институт востоковедения НАН РА (Армения, Ереван)
karogaloyan@gmail.com

Резюме: В статье представлена и анализирована политика Турции в отношении проблемы месхетинских турок. В результате исследования вопроса, можно сделать вывод, что правительство Турции использует данную проблему в своих целях. Эта политика представляет из себя потенциальную опасность для Армении и армянского народа. Во избежание этого необходимо внимательно следить за развитием ситуации и в случае возможного обострения быть готовым принять вызов.
Ключевые слова: месхетинские турки, политика Турции, безопасность Армении, Грузия, регион Самцхе-Джавахети.

The issue of the Meskhetian Turks in the context of Turkish policy

Galoyan K.A.
The Institute of Oriental Studies NAS RA (Armenia, Yerevan)
karogaloyan@gmail.com

Abstract: This article presents and analyzes Turkish policy regarding the problem of the Meskhetian Turks. As a result of the study of the issue, it can be concluded that the Turkish government uses this problem for its political purposes. That policy constitutes a potential threat for Armenia and the Armenian people. In order to prevent the danger, it is necessary to monitor carefully the development of the problem and in case of its aggravation be ready to accept the challenge.
Keywords: the Meskhetian Turks, Turkish policy, security of Armenia, Georgia, Samtskhe-Javakheti region.

Մեսխեթցի թուրքերի էթնոկրոնական խումբը կազմավորվել է Վրաստանի պատմական Մեսխեթի շրջանում[1]։ Մեսխեթցի թուրքերը սունի մահմեդականներ են և խոսում են թուրքերենի արևելաանատոլական բարբառներից մեկով։ Նրանց ծագման հարցում հետազոտողներն ընդհանուր հայտարարի չեն կարողանում գալ, քանի որ այդ հարցը հանդիսանում է քաղաքական շահարկումների առարկա։ Վարկածներից մեկի համաձայն նրանք մահմեդականացած և թրքացված վրացիներ են[2], իսկ երկրորդի համաձայն՝ էթնիկ թուրքեր[3]։ Մեսխեթցի թուրքերի ծագման առավել խորքային ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նրանց կազմավորման գործընթացին մասնակցել են ինչպես վրացիներն ու եկվոր թյուրքական տարրերը, այնպես էլ տեղաբնակ այլ էթնիկ

[1] Մեսխեթի տեղանունը կիրառվում է երկու նշանակությամբ։ Նեղ իմաստով այն ընդգրկում է մեսխերի բնակության վայրերը՝ պատմական Վերին Քարթլիի տարածքը՝ ժամանակակից Սամցխեն և Թուրքիայի կազմում գտնվող հարակից տարածքները։ Լայն իմաստով Մեսխեթին միջնադարյան վրացական պետական կազմավորումներից մեկի՝ Սամցխե Սաաթաբագոյի ամբողջ տարածքն է, որն ընդգրկում էր նաև պատմական Հայաստանի որոշ հյուսիսային շրջաններ։

[2] **მოდებაძე ვ.,** მესხური პრობლემის ანალიზი, „კალმოსანი“, თბილისი, 2010, გვ. 30-71; **ლომსაძე შ.,** სამცხე-ჯავახეთი (XVIII საუკუნის შუაწლებიდან XIX საუკუნის შუაწლებამდე), „მეცნიერება“, თბილისი, 1975, გვ. 280-369; **Мамулия Г.,** Концепция государственной политики Грузии в отношении депортированных и репатриированных в Грузию месхов. История и современность / Central Asia and the Caucasus - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (09.01.2019).

[3] **Zeyrek Y.,** Ahıska bölgesi ve Ahıska Türkleri, Ankara, 2001, s. 6-40; **Юнусов А.,** Ахыскинские (Месхетинские) турки: дважды депортированный народ / Central Asia and the Caucasus - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_20_junusov.shtml (15.01.2019).

խմբերը՝ այդ թվում հայերը[4]: Նրանք հայտնի են նաև մի շարք այլ անվանումներով՝ «մեսխեր», «մեսխեթցիներ», «թուրք-մեսխեթցիներ», «Ահըսկա[5] թուրքեր»:

1944թ. նոյեմբերին Վրաստանի ԽՍՀ Ադիգենի, Ախալցիխեի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում բնակվող բոլոր մեսխեթցի թուրքերը արտաքսվեցին Ղազախստան, Ուզբեկստան և Ղրղզստան: Ընդհանուր առմամբ բռնագաղթի ենթարկվածների թիվը հասնում էր մոտ 100 հազարի[6]: Պաշտոնական մեղադրանքն էր՝ բնակչության զգալի մասի մաքսանենգությամբ զբաղվելը, արտագաղթի ցանկությունը և թուրքական հետախուզական մարմինների համար ծառայելը[7]: Որոշ հեղինակներ արտաքսման պատճառ են համարում Խորհրդային Միության Թուրքիայի վրա հարձակվելու ծրագրերը[8]: Այս տեսակետի օգտին բերվող գլխավոր փաստարկներից մեկն այն է, որ մեսխեթցի թուրքերը տեղահանվել են երբ արդեն Երկրորդ աշխարհամարտը մոտենում էր իր ավարտին, ուստի Թուրքիայի կողմից հարձակման վտանգը էականորեն նվազել էր: Արտաքսման հետևանքով սովից և ցրտից զոհվեցին շուրջ 15-17 հազ. մարդ[9]:

1956թ. ի տարբերություն չեչենների, ինգուշների և միևնույն բախտին արժանացած այլ ժողովուրդների մեծ մասի, մեսխեթցի թուրքերին իրենց բնակության նախկին վայրեր վերադառնալ թույլ չտվեցին, ինչն ամենայն հավանականությամբ պայմանավորված էր 1952թ. Թուրքիայի ՆԱՏՕ-ին անդամակցությամբ[10], որի արդյունքում Ախալցիխեն և շրջակա տարածքները ստացան կարևոր ռազմավարական նշանակություն:

1989թ. Ուզբեկստանի ԽՍՀ Ֆերգանայի դաշտում տեղի ունեցած դեպքերը ստիպեցին հանրապետությունում բնակվող գրեթե բոլոր մեսխեթցի թուրքերին լքել նրա տարածքը և ապաստանել Ռուսաստանի Դաշնությունում (Հյուսիսային Կովկաս և կենտրոնական շրջաններ), Ադրբեջանում, Ղազախստանում, Ղրղզստանում և Ուկրաինայում[11]: Նրանց հայրենադարձության հարցը կրկին դարձավ հրատապ: Սակայն նորանկախ Վրաստանի անկայուն քաղաքական վիճակը, ծանր սոցիալ տնտեսական պայմաններն ու այս հարցի շուրջ իշխանությունների և հանրության ունեցած բացասական դիրքորոշումն այդ գործընթացում առաջացրին խոչընդոտներ: Հարցը հայտնվեց նաև Թուրքիայի իշխանությունների ուշադրության կենտրոնում:

Միևնույն ժամանակ, մի շարք երկրներում ձևավորվեցին մեսխեթցի թուրքերի բազմաթիվ կազմակերպություններ, որոնց մոտեցումները խնդրի լուծման շուրջ ունեին ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Մի մասը իրենց համարում էին էթնիկ թուրքեր և որպես իրենց պատմական հայրենիք էին դիտարկում Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի շրջանը: Այս ուղղությունն ունեցող առավել ազդեցիկ կազմակերպությունն է Ռուսաստանում և Ադրբեջանում իր գործունեությունը ծավալած «Վաթան»-ը (թուրքերենից թարգմանաբար «Հայրենիք»): Նրան հակառակ հանդես եկավ «Խսնա» (վրացերենից թարգմանաբար «Փրկություն») կազմակերպությունը, որի ներկայացուցիչները համարում էին իրենց մահմեդական վրացիներ և պատրաստ էին վերադառնալ Վրաստանի ցանկացած շրջան: 1999թ. «Խսնա»-ն դադարեցրեց իր գործունեությունը և նրա փոխարեն ստեղծվեց «Վրացի հայրենադարձների միություն»-ը: «Ումիտ», «Ղրղզստանում բնակվող թուրքերի միություն», «ԱՊՀ երկրների ահըսկա թուրքերի միջազգային միություն» կազմակերպությունները իրենց հայրենիքն էին համարում Թուրքիան և կոչ էին անում տեղա-

---

[4] **Գալոյան Կ.,** Մեսխեթցի թուրքերի կազմավորումը Սամցխեի ու Ջավախքի ժողովրդագրական շարժի համապատկերում / Էջմիածին, 2018, ԺԱ, էջ. 55-70:

[5] «Ահըսկա» (Ahıska) Ախալցիխե քաղաքի թուրքերեն անվանումն է, որի շրջակայքում էլ բնակվել են մեսխեթցի թուրքերը:

[6] **Aydıngün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.,** Meskhetian Turks An Introduction to their History, Culture and Resettlement Experiences / Culture Profile, 2006, 20, p. 6; **Modebadze V.,** Historical Background of Meskhetian Turks' Problem and Major Obstacles to the Repatriation Process / IBSU Scientific Journal, 2009, 3, p. 115.

[7] Докладная записка наркома внутренних дел Л.П. Берии И.В. Сталину, В.М. Молотову, Г.М. Маленкову о проведении операции по переселению турок, курдов и хемшинов из пограничных районов Грузинской ССР / Архив Александра Н. Яковлева - www.alexanderyakovlev.org/fond /issues-doc/1022541 (07.01.2019).

[8] **მოდებაძე ვ.,** նշվ. աշխ., გვ. 76-77.

[9] **Юнусов А.,** նշվ. աշխ.; **მოდებაძე ვ.,** նշվ. աշխ., გვ. 78.

[10] **Aydıngün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.,** նշվ. աշխ., p. 7; **Zeyrek Y.,** նշվ. աշխ., s. 59.

[11] **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.,** Meskhetians Homeward Bound... / ECMI - Caucasus, Georgia, 2001, p. 27.

փոխվել այնտեղ[12]: Այս կազմակերպություններից Անկարայի աջակցությունը ստացան Թուրքիա տեղափոխվելու և բացառապես Սամցխե-Ջավախեթի վերադառնալու կոչ անող կազմակերպությունները: Թուրքիան նաև փորձեց քայլեր ձեռնարկել իրարից անկախ կազմակերպություններին համախմբելու և ավելի արդյունավետ գործելու ուղղությամբ: Այդ նպատակով 2003թ. Օգոստոսին Թուրքիայում գործող մեսխեթցի թուրքերի շուրջ 20 կազմակերպություններից ինը ձևավորեցին «Ահիսկա թուրքերի կազմակերպությունների միությունը»[13]:

Սկզբնական փուլում թուրքական կառավարությունը փորձեց մեսխեթցի թուրքերին բնակեցնել Թուրքիայում: 1992թ. ընդունվեց օրենք, որը նպաստում էր նախկին խորհրդային հանրապետություններից մեսխեթցի թուրքերի ներգաղթին: Թուրքիայի կառավարությունը պատրաստ էր ֆինանսական աջակցություն ցույց տալ շուրջ 500 ընտանիքի: Այնուամենայնիվ, այդ նախաձեռնությունը մեծ հաջողություն չունեցավ և 1993-1994թթ. ընթացքում Թուրքիա տեղափոխվեց միայն 179 ընտանիք[14]: Նրանց մեծ մասը բնակեցվեց պատմական Արևմտյան Հայաստանի տարածքում:

Հետագա տարիներին Թուրքիա ներգաղթեցին ավելի մեծ թվով մեսխեթցի թուրքեր: Վերջին մի քանի տարիներին Թուրքիա տեղափոխված մեսխեթցի թուրքերի մեծ մասը Ուկրաինայի արևելյան շրջաններից են, որոնց նույնպես Թուրքիայի իշխանությունները փորձում են բնակեցնել երկրի արևելյան շրջաններում՝ պատմական Արևմտյան Հայաստանում[15], չնայած որ մեսխեթցի թուրքերի մեծ մասը ձգտում են տեղափոխվել տնտեսապես ավելի զարգացած շրջաններ: Ներկայումս Թուրքիայում բնակվում են մոտ 35-40 հազար[16] մեսխեթցի թուրքեր, որոնք առավել խոշոր համայնքներ են ձևավորել Բուրսա, Անթալիա և Ստամբուլ քաղաքներում: Ի դեպ, XIXդ. և XXդ. Օսմանյան կայսրություն, այնուհետև Թուրքիա տեղափոխվածներն արդեն գրեթե ամբողջությամբ ուծացված են[17]:

Չկարողանալով մեսխեթցի թուրքերին բնակեցնել արևելյան շրջաններում, Թուրքիայի կառավարությունը 1990-ական թվականների երկրորդ կեսին ավելի ակտիվ սկսեց աջակցել Սամցխե-Ջավախեթի վերադառնալու պահանջով հանդես եկող կազմակերպություններին: Այդ նպատակով Թուրքիայի պատվիրակների ջանքերով մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը բարձրացվեց միջազգային ատյաններում, մասնավորապես ԵԱՀԽ-ում[18]: Արդյունքում 1999թ. ԵԱՀԽ անդամակցությամբ Վրաստանը ստանձնեց մեսխեթցի թուրքերի հայրենադարձության կազմակերպման պարտավորություն:

Հաջորդ տարիներին Թուրքիայի նախաձեռնությամբ պարբերաբար տեղի էին ունենում տարբեր ձևաչափերով հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում էր մեխսեթցի թուրքերի հայրենադարձության հարցը: Այդ հանդիպումների ժամանակ վրացական կողմի՝ Վրաստանի տարբեր շրջաններում բնակվելու առաջարկը հանդիպում էր կըտրուկ քննադատության: Այսպես, «Մեսխեթցի թուրքերի կազմակերպությունների դաշնության» նախագահ Օսման Չելիկը, Ադրբեջանում «Վաթան»-ի ներկայացուցչության նախագահ Իբրահիմ Բուրխանովը և մեսխեթցի թուրքերի մի շարք այլ կազմակերպությունների ու համայնքների ներկայացուցիչները պնդում էին, որ իրենք ցանկանում են վերադառնալ հենց Ախալցիխեի շրջան, և այլ տարածքներ չեն գնա, ինչպես նաև Վրաստանի իշխանություններին կոչ էին անում հակադարձել տեղի հայ բնակչության դիրքորոշմանը[19]:

Վերջին շրջանում Թուրքիայի կառավարության և մեսխեթցի թուրքերի կազմակեր-

[12] **Pentikäinen O., Trier T.,** Between Integration and Resettlement: The Meskhetian Turks / ECMI Working Paper # 21, Flensburg, 2004, pp. 27-30.

[13] **Pentikäinen O., Trier T.,** նշվ. աշպ., p. 29.

[14] **Շաքարյան Ա.,** Մեսխեթցի թուրքեր. Աշխարհաքաղաքական գործոն տարածաշրջանում / Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, «Ասողիկ», Երևան, 2006, էջ 78:

[15] Ukrayna'daki çatışmalardan kaçan Ahıska Türkleri Erzincan'a getirildi - https://tr.euronews.com/2015/12/26/ukrayna-daki-catismalardan-kacan-ahiska-turkleri-erzincan-a-getirildi (24.01.2019); Ukrayna'dan Van Gölü kıyısına: Yeni Ahıska Ahlat - http://www.hurriyet.com.tr/gundem/ukraynadan-van-golu-kiyisina-yeni-ahiska-ahlat-40116688 (24.01.2019).

[16] **Aydıngün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.,** նշվ. աշխ., p. 13; **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.,** նշվ. աշխ., p. 54.

[17] **Pentikäinen O., Trier T.,** նշվ. աշխ., p. 25.

[18] Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - https://regnum.ru/news/671851.html (10.01.2019).

[19] Տե՛ս նույն տեղում:

պությունների ներկայացուցիչների միջև շփումները կրկին ակտիվացել են: 2018թ. մարտ ամսին «DATÜB» Ահիսկա թուրքերի համաշխարհային միության նախագահ Զիյաթդին Կասանովը Բաքվում հանդիպեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեվլութ Չավուշօղլուի հետ: Հանդիպման ընթացքում քննարկված հարցերի թվում էր նաև մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի հարցը և Վրաստանի կողմից հարուցվող խոչընդոտները[20]: Նույն թվականի հունիս ամսին Անթալիայում նույն ձևաչափով տեղի ունեցած հանդիպման արդյունքում, Թուրքիայում կայանալիք նախագահական ընտրություններից անմիջապես առաջ Զիյաթդին Կասանովը հայտարարեց, որ մեսխեթցի թուրերն աջակցում են Ռեջեփ Թայիփ Էրդողանին[21]: Ըստ էության, այդ հանդիպումների նպատակը Թուրքիայի կառավարության համար ընտրություններին նախապատրաստվելն էր: Միևնույն ժամանակ, մեսխեթցի թուրքերի համայնքի պատրաստակամությունը, խոսում է այն մասին, որ վերջիններս կառավարությունից իրենց խնդիրները լուծելու սպասելիքներ ունեն: Թե ինչ ձևով կաջակցի կառավարությունը այդ խնդիրների լուծմանը, այս պահին դեռ պարզ չէ:

Թուրքիայում Սամցխե-Ջավախեթին դիտարկվում է որպես ռազմավարական նշանակություն ունեցող տարածք: Թուրքիան ձգտում է տարածաշրջանում հաստատել իր գերիշխանությունը և այդ հարցում մրցակցության մեջ է մտնում Ռուսաստանի հետ: Այստեղով են անցնում Թուրքիայի և Ադրբեջանի համար կարևոր նշանակություն ունեցող նավթատար և գազատար խողովակաշարերը, ինչպես նաև Թուրքիան Ադրբեջանի և միջինասիական հանրապետությունների հետ կապող տարանցիկ ճանապարհներն ու երկաթուղին: Ընդ որում, այդ երթուղու վրա Սամցխե-Ջավախեթին միակ շրջանն է, որտեղ չի գերակշռում թյուրքալեզու բնակչությունը և, ըստ էության, բաժանում է թուրքերին ադրբեջանցիներից: Միևնույն ժամանակ, մեսխեթցի թուրքերի Սամցխե-Ջավախեթի վերադարձի դեպքում Ադրբեջանը և Թուրքիան կարող են նրանց օգտագործել որպես Հայաստանի շրջափակման իրենց քաղաքականությունն ավելի արդյունավետ իրականացնելու գործոն և ավելի մեծ ճնշում գործադրել Արցախի հիմնախնդիրն իրենց օգտին լուծելու համար[22]: Այսպիսով, Հայաստանը կհայտնվի թուրք-ադրբեջանական օղակում, քանի որ Իրանի հյուսիսային շրջաններն ու Վրաստանի Քվեմո Քարթլի շրջանը նույնպես գերազանցապես բնակեցված են ադրբեջանցիներով: Այդ հանգամանքն անկասկած կօգտագործվի Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունները վերսկսելու դեպքում: Օրինակ, 1990-ական թվականներին Ռուսաստանից Հայաստան մուտք գործող միակ գազատարը բազմաթիվ անգամ պայթեցվել է գերազանցապես ադրբեջանցիներով բնակեցված Մառնեուլիի շրջանում[23]: Ի դեպ, 1918թ. Սամցխեի մահմեդական բնակչությունը քրիստոնյա հայերի և վրացիների դեմ ռազմական գործողություններ էր իրականացնում[24]: Այս ամենը հաշվի առնելով մեսխեթցի թուրքերի վերադարձը Սամցխե-Ջավախեթի կարող է տեղացի հայերի և վրացիների հետ լարված հարաբերություններ առաջացնել, ինչի մասին վկայում են 2009թ. Ախալցիխեի շրջանում անցկացված հարցման արդյունքները, համաձայն որոնց հարցվածների 87%-ը դեմ է արտահայտվել մեսխեթցի թուրքերի վերադարձին[25]: Այլ ուսումնասիրությունները ևս փաստում են Վրաստանում մեսխեթցի թուրքերի հայրենադարձության նկատմամբ հանրության բացասական վերաբերմունքի մասին[26]: Հարկ է նշել, որ Վրաստանի սահմանամերձ

[20] **İbrahimoğlu M.,** DATÜB, Dışişleri Bakanı Mevlüt Çavuşoğlu ile Bakü'de görüştü - https://www.ahiska.net/haber/637/datub-disisleri-bakani-mevlut-cavusoglu-ile-baku-de-gorustu (19.02.2019).

[21] **İbrahimoğlu M.,** Dünya Ahıska Türkleri Birliği'nden ERDOĞAN'a destek - https://www.ahiska.net/haber/638/dunya-ahiska-turkleri-birligi-nden-erdogan-a-destek (19.02.2019).

[22] **Kurt S.,** Ahıska'nın Türkiye İçin Jeopolitik Önemi / Karadeniz Araştırmaları, 2018, 58, s. 208-212.

[23] Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - https://regnum.ru/news/671851.html (10.01.2019).

[24] **Մելքոնյան Ա.,** Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, «Զանգակ-97», Երևան, 2003, էջ 272-285; **Маилян М.,** Между Грузией и Турцией: особенности ирредентизма на примере Аджарии и Самцхе-Месхетии (1918-1921 гг.) / Историческое пространство. Проблемы истории стран СНГ, Москва, 2015, с. 137-142.

[25] **მოდებაძე ვ.,** նշվ. աշխ., ցց. 181-182.

[26] **Бадурашвили И., Цуладзе Г., Анчабадзе Г.,** Проблемы репатриации месхов в Грузию / Central Asia and the Caucasus - https://www.ca-c.org/journal/2000/journal_rus/cac07_2000/21.badurashv.shtml (20.02.2019).

շրջաններում մեծաթիվ թուրքական համայնքի միջոցով Անկարան տարածաշրջանում իր քաղաքականությունն իրականացնելիս լրացուցիչ ճնշում կարող է գործադրել նաև Վրաստանի իշխանությունների նկատմամբ: Ավելին, Թուրքիայի սահմանին բնակվող մեսխեթցի թուրքերը կարող են անհրաժեշտության դեպքում օգտագործվել Անկարայի կամ որևէ այլ շահագրգիռ արտաքին ուժի կողմից՝ Վրաստանում նոր անջատողական շարժում սկսելու համար:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Թուրքիան մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրն օգտագործում է իր աշխարհաքաղաքական շահերին ծառայեցնելու նպատակով: Թուրքիա տեղափոխվող մեսխեթցի թուրքերին Անկարան փորձում է օգտագործել քրդաբնակ շրջաններում իր համար ցանկալի դեմոգրաֆիական փոփոխություններ իրականացնելու համար: Թուրքիայի կառավարությունը մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի նկատմամբ անտարբեր չլինելով, ստանում է նրանց աջակցությունը ներքաղաքական պայքարում, իսկ Սամցխե-Ջավախեթիում վերաբնակեցնելով Անկարան ձգտում է Վրաստանում իր ազդեցությունը մեծացնելուն և տարածաշրջանում իր գերիշխանությունն ամրապնդելուն: Միաժամանակ այդ քայլով շահեկան դրության մեջ կհայտնվի նաև Ադրբեջանը, որը կձգտի օգտագործել ստեղծված իրավիճակը և բարելավել իր դիրքերը Արցախյան հիմնախնդիրն իր օգտին լուծելու հարցում:

Ելնելով վերոնշյալից, Հայաստանի իշխանությունները պետք է աչալուրջ լինեն մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցի նկատմամբ և խնդրի առաջ գալուն զուգահեռ ընդունեն համապատասխան դիրքորոշում վերը նշված բացասական երևույթներից խուսափելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գալոյան Կ.,** Մեսխեթցի թուրքերի կազմավորումը Սամցխեի ու Ջավախքի ժողովրդագրական շարժի համապատկերում / Էջմիածին, 2018, ԺԱ, էջ. 55-70:
2. **Մելքոնյան Ա.,** Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, «Զանգակ-97», Երևան, 2003:
3. **Շաքարյան Ա.,** Մեսխեթցի թուրքեր. Աշխարհաքաղաքական գործոն տարածաշրջանում / Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, «Ասողիկ», Երևան, 2006:
4. **Aydıngün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.,** Meskhetian Turks An Introduction to their History, Culture and Resettlement Experiences / Culture Profile, 20, 2006.
5. **İbrahimoğlu M.,** DATÜB, Dışişleri Bakanı Mevlüt Çavuşoğlu ile Bakü'de görüştü - https://www.ahiska.net/haber/637/datub-disisleri-bakani-mevlut-cavusoglu-ile-baku-de-gorustu (19.02.2019).
6. **İbrahimoğlu M.,** Dünya Ahıska Türkleri Birliği'nden ERDOĞAN'a destek - https://www.ahiska.net/haber/638/dunya-ahiska-turkleri-birligi-nden-erdogan-a-destek (19.02.2019).
7. **Kurt S.,** Ahıska'nın Türkiye İçin Jeopolitik Önemi / Karadeniz Araştırmaları, 2018, 58.
8. **Modebadze V.,** Historical Background of Meskhetian Turks' Problem and Major Obstacles to the Repatriation Process / IBSU Scientific Journal, 2009, 3.
9. **Pentikäinen O., Trier T.,** Between Integration and Resettlement: The Meskhetian Turks / ECMI Working Paper # 21, Flensburg, 2004.
10. **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.,** Meskhetians Homeward Bound... / ECMI – Caucasus, Georgia, 2001.
11. Ukrayna'daki çatışmalardan kaçan Ahıska Türkleri Erzincan'a getirildi - https://tr.euronews.com/2015/12/26/ukrayna-daki-catismalardan-kacan-ahiska-turkleri-erzincan-a-getirildi (24.01.2019).
12. Ukrayna'dan Van Gölü kıyısına: Yeni Ahıska Ahlat - http://www.hurriyet.com.tr/gundem/ukraynadan-van-golu-kiyisina-yeni-ahiska-ahlat-40116688 (24.01.2019).
13. Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - https://regnum.ru/news/671851.html (10.01.2019).
14. **Бадурашвили И., Цуладзе Г., Анчабадзе Г.,** Проблемы репатриации месхов в Грузию / Central Asia and the Caucasus - https://www.ca-c.org/journal/2000/journal_rus/cac07_2000/21.badurashv.shtml (20.02.2019).
15. Докладная записка наркома внутренних дел Л.П. Берии И.В. Сталину, В.М. Молотову, Г.М. Маленкову о проведении операции по переселению турок, курдов и хемшинов из пограничных районов Грузинской ССР / Архив Александра Н. Яковлева – https://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1022541 (07.01.2019).
16. **Маилян М.,** Между Грузией и Турцией: особенности ирредентизма на примере Аджарии и Самцхе-Месхетии (1918-1921 гг.) / Историческое пространство. Проблемы истории стран СНГ, Москва, 2015.
17. **Юнусов А.,** Ахыскинские (Месхетинские) турки: дважды депортированный народ / Central Asia and the Caucasus - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_20_junusov.shtml (15.01.2019).
18. **ლომსაძე შ.,** სამცხე-ჯავახეთი (XVIII საუკუნის შუაწლებიდან XIX საუკუნის შუაწლებამდე), „მეცნიერება“, თბილისი, 1975.
19. **მოდებაძე ვ.,** მესხური პრობლემის ანალიზი, „კალმოსანი“, თბილისი, 2010.